

ՄԵՐ ՀԱՆԴԵՍԻ 50-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԱՌԹԻՎ

Ընթերցողին է հանձնվում «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 50-րդ համարը, որի առթիվ խմբագրությունը հարկ է համարում մի քանի խոսքով անդրադառնալ մեր պարբերականի անցած ուղուն և հետագա անելիքներին:

Երևանի պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ տարիներից, մեզ մոտ կառավող գիտական աշխատանքներն արտացոլելու նպատակով, հրատարակվել են գիտական ժողովածուներ: 1925 թվականից սկսեց լույս տեսնել համալսարանի «Գիտական տեղեկագիրը»: Այն սկզբնապես հրատարակվում էր տարին մեկ անգամ և արտացոլում էր հասարակական ու բնական գիտությունների ասպարեզներում ձեռք բերված կարևորագույն նվաճումները: Մինչև 1960-ական թվականների կեսերը լույս են տեսել համալսարանի գիտական ժողովածուների ավելի քան 100 հատոր տարբեր վերնագրերով՝ «Աշխատություններ», «Գիտական աշխատություններ», «Գիտական տեղեկագիր» և այլն, որոնց մեջ խոշոր տեղ է հատկացվել հասարակական գիտություններին: Սակայն այդ ժողովածուները չէին հրատարակվում կանոնավոր պարբերականությամբ, իսկ բնագիտական ու հասարակագիտական ուսումնասիրությունների համատեղ հրատարակումը նույն ժողովածուի մեջ սատեղում էր որոշակի դժվարություններ: Գիտության անընդհատ զարգացմամբ, նորագույն նյութերի առաջացմամբ և կադրերի անի թելադրանքով կատարելագործվեցին նաև պարբերական հրատարակությունների բովանդակությունն ու ձևերը, առանձնացվեցին հասարակական և բնական գիտությունները: Գիտական ժողովածուների փոխարեն 1967 թվականից սկսեցին լույս տեսնել «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ) և «Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ) պարբերականները: Տարին երեք անգամ կանոնավոր պարբերականությամբ հրատարակվում է «Բանբերը», և այժմ լույս է տեսնում նրա 50-րդ համարը:

«Բանբերը» հիմնականում արտացոլել է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքի արդյունքները: Սակայն այն չի եղել նեղ գերատեսչական հրատարակություն: Մեր հանդեսի էջերում բազմիցս հրապարակվել են նաև հանրապետության գիտական այլ հիմնարկների, Սովետական Միության տարբեր ֆաղափների, ինչպես նաև Սփյուռփի հայագետների հոդվածները:

Հանդեսի «Հոդվածներ», «Բանավեճ և ֆենարկում», «Հրապարակումներ և հարորդումներ», «Գրքերի տեսություն» և «Գիտական կյանք» մշտական բաժիններում համապատասխանաբար տպագրվում են պատմության և փիլիսոփայության, գրականագիտության և լեզվաբանության, իրավագիտության և տնտեսագիտության վերաբերյալ ուսումնասիրություններ, նշանավոր գրողների, գիտության և մշակույթի գործիչների ժառանգության անտիպ էջեր,

գրախոսվում են նոր լույս տեսած գրքերը, արտացոլվում է համալսարանի գիտական կյանքը: Այս ամենի հետ միասին «Բանբերը» առանձին բաժիններ է հատկացնում պատմա-ֆաղափական կարևոր իրադարձություններին, լուսաբանում է կոմունիստական կուսակցության ներքին և արտաքին ֆաղափականության հրատապ հարցերը:

Հոգավով գիտության արժանավոր հերթափոխ դաստիարակելու մասին, հանդեսն իր էջերը մշտապես տրամադրել է նաև համալսարանի և հանրապետության մյուս գիտական հիմնարկների երիտասարդ գիտնականներին՝ ասպիրանտներին, հայցվորներին, որոնցից շատերը իրենց գիտական մկրտությունը ստացել են մեր պարբերականում:

«Բանբերում» հրապարակված հոդվածների մի մասը կրել է բանավիճարկի բնույթ, արձարձել է հարցեր, որոնց շուրջը արտահայտվել են տարբեր տեսակետներ: Թեև միշտ չէ, որ ձեռք են բերվել վերջնական եզրակացություններ՝ տնտեսվող հարցերի վերաբերյալ, բայց այդ հրապարակումները բարձրացրել են հայագիտական մի շարք վիճելի հարցերի գիտական հետազոտության մակարդակը:

Իր 50 համարներում հանդեսը տպագրել է շուրջ 1000 հոդված, հրապարակում և հաղորդում, որոնք որոշակի ներդրում են մեր հանրապետությունում հասարակական գիտությունների զարգացման մեջ:

ՍՍԿԿ Կենտկոմի 1983 թ. Հունիսյան պլենումը նոր, ավելի բարձր պահանջներ դրեց հասարակական գիտությունների առջև: Հասարակական գիտությունների հիմնական խնդիրն է, նշվեց պլենումում, զարգացած սոցիալիստական հասարակության սոցիալ-ֆաղափական և գաղափարախոսական պրոբլեմների բազմակողմանի և խոր լուսաբանումը: Գիտական մամուլի էջերում պետք է լայնորեն արձարձվեն փոփոխության և տնտեսագիտության, պատմագիտության և իրավագիտության, գրականագիտության և լեզվաբանության այն խնդիրները, որոնք բխում են մեր հասարակության զարգացման արդի պահանջներից:

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրությունը բոլոր ջանքերը կգործադրի համալսարանում և մեր հանրապետությունում հասարակական գիտությունների զարգացմանը նպաստելու համար: Հուսով ենք, որ համալսարանի հասարակագիտական ամբիոնները ավելի ակտիվորեն կաշխատակցեն մեր հանդեսին, կօգնեն բարձրացնելու մեր աշխատանքը նոր խնդիրների մակարդակին: